

Ավարտվեց Ազգային ժողովի գավաթի խաղարկության մարզային փուլը

18.04.2015թ.

Ավարտվեց «Ազգային ժողովի գավաթի խաղարկության» խաղերի մարզային փուլը, որին մասնակցում էին մարզի 16 հանրակրթական դպրոցների երրորդից վեցերորդ դասարանների 64 աշակերտներ՝ յուրաքանչյուր դասարանից 2 տղա և 3 աղջիկ:

Այս մրցապայքարում հաղթողներ դարձան Կապանի թիվ 5 հիմնական դպրոցի 3-րդ և 4-րդ , թիվ 13-ի՝ 5-րդ և թիվ 3 միջնակարգի՝ 6-րդ դասարանների թիմերը: Հաղթող թիմերը իրավունք ստացան մասնակցելու հանրապետական եզրափակիչ փուլին: Երեխաները մրցում էին ցատկ տեղից, հեռացատկ, փոխանցումավազք, 30մ և 60մ վազք, թենիսի գնդակի նետում և ձգում մարզաձևերում:

Մրցումներն անցկավեցին Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցի մարզահրապարակում:

Մինչ մարզային փուլը, նախապես կայացել էին ներդպրոցական և տարածքային փուլերը: Հաղթանակ տարած դպրոցների թիմերն էլ կմասնակցեց եզրափակիչ փուլին: